Հայտարարություն

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ անգլերեն լեզվով թարգմանիչների թափուր հաստիքները համալրելու համար

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ անգլերեն լեզվով թարգմանիչների թափուր հաստիքները համալրելու համար

Պարտականությունները և լիազորությունները՝

ա) կատարելու է իրավական ակտերի, ազգային զեկույցների, դատական ակտերի և այլ առանցքային փաստաթղթերի գրավոր թարգմանություններ (հայերեն-անգլերեն լեզվազույգով)

Նշված թափուր հաստիքը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) թարգմանչական գործի, լեզվաբանության, իրավագիտության կամ հարակից այլ բնագավառի բարձրագույն կրթություն,

բ) թարգմանչական գործունեության աշխատանքային փորձ,

գ) **անգլերենի գերազանց իմացությունը պարտադիր է,** ռուսերենի և (կամ) այլ օտար լեզուների իմացությունը կհամարվի առավելություն,

դ) իրավական ակտերի թարգմանության բնագավառում փորձը կհամարվի առավելություն,

ե) բանավոր թարգմանությունների բնագավառում փորձը կհամարվի առավելություն,

զ) թարգմանչական գործընթացին օժանդակող թարգմանության ավտոմատացված համակարգերի/CAT Tools (օր. SDL Trados և այլն) իմացությունը, դրանցից օգտվելու հմտությունները, ինչպես նաև համապատասխան սերտիֆիկացման առկայությունը կհամարվի առավելություն,

է) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) կենսագրական՝ հայերենով կամ համապատասխան օտար լեզվով (անգլերեն),

բ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, իսկ ուսանողների պարագայում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից տեղեկանք,

գ) նույնականացման քարտի պատճեն կամ անձնագրի և սոցիալական քարտի պատճեն (բացակայության դեպքում՝ տեղեկանքի պատճեն),

դ) երաշխավորագիր/բնութագիր նախկին աշխատավայրից և (կամ) բարձրագույն ուսումնական հաստատությունից, առկայության դեպքում:

Փաստաթղթային փուլն անցած դիմորդները կմասնակցեն գրավոր թեստավորման (լեզվի իմացություն, թարգմանչական հմտություններ), իսկ թեստավորման արդյունքում ամենաբարձր միավորներ ստացած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Փաստաթղթերի ընդունման **վերջին ժամկետն է՝ 09.09.2016թ**.:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ուղարկել **mzargaryan@translation-centre.am** էլեկտրոնային հասցեով, կամ ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ Հալաբյան 41ա հասցեով, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: